ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ գրադարանավարներ,

Ընդունեք իմ անկեղծ շնորհավորանքներն ու ջերմ բարեմաղթանքները Ձեր մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա կապակցությամբ: Տոնը կարևոր առիթ է արժևորելու ձեր նվիրական ու պատասխանատու աշխատանքը:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր գոյությունը պահպանել է գրի ու գրքի շնորհիվ: Մեր ազգային ինքնության ամուր հիմքը եղել է կրթությունն ու գիտելիքը, իսկ գիրքն այն սուրբ զենքն է, որով հաղթահարել ենք փորձությունները, դիմակայել մարտահրավերներին և պահպանել մեր արժեհամակարգը:

Այս կարևոր գործում ձեր դերն անփոխարինելի է. դուք ոչ միայն պահպանում ու փոխանցում եք մեր մշակութային և հոգևոր ժառանգությունը, այլև մնում եք նոր սերունդների լուսավոր ուղեկիցը: Ձեր շնորհիվ այսօր էլ գրադարանները շարունակում են լինել համայնքի մտավորական կյանքի կենտրոններ՝ մի վայր, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է բացահայտել գիտելիքի հարստությունը և գտնել ոգեշնչման նոր աղբյուր:

Ձեր տքնաջան աշխատանքի շնորհիվ գրադարանները մնում են բաց հարթակ բոլորի համար՝ նպաստելով կրթության զարգացմանը, ազգային ինքնության պահպանմանը և նոր սերունդների գիտելիքի ծարավը հագեցնելու աղբյուր:

Սիրելի՛ գրադարանավարներ, մաղթում եմ ձեզ առողջություն, անձնական ու գործնական հաջողություններ, անսպառ եռանդ և արժանի գնահատանք պատասխանատու աշխատանքի համար:

Շնորհակալություն եմ հայտնում նվիրումի, բարեհամբույր վերաբերմունքի և մեր երեխաների ու երիտասարդների մեջ ընթերցանության սերը սերմանելու համար: